«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION



ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/651

«24» 05 2022թ.

**«ԽԱՉՄԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Խ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Միքայելյան,

Համաձայն 2022 թվականի ապրիլի 11-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Խաչմիք» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Ըստ պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 11-ին: Մայիսի 13-ին Ձեզ տրամադրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև մայիսի 23-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, և գրության բնօրինակը ուղարկվել է հայտով ներկայացված հասցեին: Սակայն Ձեր կազմակերպության կողմից մատարակարում կրկին չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 11.04.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է Համալսարանի ռեկտորի 13.05.2022թ.-ի գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/610

«13» 05 2022 թ.

Խաչմիք ՍՊԸ տնօրեն՝

Պարոն Խաչիկ Միքայելյանին

Հարգելի պարոն Միքայելյան

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊ ընկերության միջև սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքատեսակների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված սույն թվականի մայիսի 11-ը:

Հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊԸ-ի միջև մինչ օրս չի իրականացվել պայմանագրով սահմանված որևէ ապրանքատեսակի հանձնման-ընդունման գործընթաց:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրի /2.1.1/, /2.1.5/, /2.4.1/ կետերը, խնդրում ենք Ձեզ մինչև սույն թվականի մայիսի 23-ը ներառյալ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Հակառակ դեպքում կկիրառվեն թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով սահմանված համապատասխան դրույթները:

Հարգանքով՝

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան